

ես չունէի մտատեսութիւնը արեւելահայ գործիչին, քանի որ Ծի դէպքերուն մեր կողմերը երեւցող տղաքը Պոլսէն, Ռոստոսթոյէն, Պարտիզակէն, շատ-շատ Սեբաստիայէն, Կարինէն կը կրկնէին մեր կաղապարները: Սփիւռքի դալկութիւնները, ծիւրումները պահ մը կը հեռացնեմ դատումի դաշտէն, բերելու համար հոն, մինչեւ 1915 վխտացող մարդերը Թուրքիոյ բոլոր մեծ կեդրոններուն մէջ: Ասոնք, լայն չափով Մաթիկին երկրէն, չէին սեղմուեր նախատիպ կաղապարին ներքեւ: Իմ էջերը նեղ՝ արտահանելու համար տիպարը, որ 1922էն ետք շարունակեց գործել, իբրեւ արեւելահայ գործիչ: